2022 Թ. ԱՄՌԱՆԸ ԶՈՐԱՑՐՎՈՂ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ՝ 2022Թ. ԲՈՒՀԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ

2022թ. ամռանը զորացրվող դիմորդները, համաձայն ՀՀ կառավարության 2012թ. ապրիլի 26-ի թիվ 597-Ն որոշման 16-րդ և 30-րդ կետերի, բուհերիընդունելության մրցույթին մասնակցելու համար dimord.am կայքում կարող են դիմում- հայտ լրացնել հունիսի 26-ից հուլիսի 1-ը՝ մինչև ժամը 17:00:

Մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և 2022թ. ամռանը զորացրվող դիմորդները ՝

1) ընդհանուր մրցույթով անվճար ուսուցմամբ ընդունվում են՝ըստ մասնագիտությունների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված տեղերի.

2) անվճար ուսուցման մրցույթից դուրս մնալու դեպքում դիմորդը բուհի նույն մասնագիտության վճարովի ուսուցման համակարգ ընդունվում է մրցույթից դուրս՝ առնվազն 7.5 միավոր ստանալու դեպքում:

2022թ. ամռանը զորացրվող զինծառայողներն օգտվում են 2012թ. ապրիլի 26-ի թիվ 597-Ն որոշման հավելվածի 80-րդ կետով սահմանված՝ բանակից զորացրվածների արտոնությունից:

Ամռանը զորացրվող զինծառայողները կարող են դիմել՝

1) տվյալ տարվա ընդունելության մրցույթին՝ մինչև զորակոչվելն ստացած միասնական քննությունների վկայագրով մասնակցելու համար.

2) տվյալ տարվա ընդունելության քննությանը մասնակցելու համար:

2022թ. ամռանը զորացրվող զինծառայողները զորամասի հրամանատարի կողմից տրված տեղեկանք են ներկայացնում այն մասին, որ նրանց զորացրումը տեղի է ունենալու 2022թ. ամռանը: Զորացրվող զինծառայողի կողմից տրված լիազորագրում նշված լիազորված անձն առցանց եղանակով հայտագրվում է dimord.am կայքում՝ նշելով արտոնության տեսակը, տեղեկանքը ուղարկում բուհի ընդունող հանձնաժողովին:

2022թ. ամռանը զորացրվող և քննություն հանձնող զինծառայողը կամ լիազորված անձը դիմում-հայտում նշում է բուհը, ընդունելության քննությունները և ընտրած մասնագիտությունը, իսկ վկայագիր ունեցող զինծառայողը՝ մրցույթին մասնակցելու համար վկայագրում առկա քննական առարկաները, գնահատականները և մասնագիտությունը:
2022թ. ամռանը զորացրվող զինծառայողներին ընդունելության դիմում-հայտերի լրացման գործընթացին օժանդակում և ԳԹԿ անձնական համար է տրամադրում նրա կամ լիազորված անձի բնակության վայրին մոտ գտնվող և այդ նպատակով առանձնացված դպրոցը
/անձնական համար տրամադրող դպրոցների ցանկը՝ հետևյալ հղմամբ՝
http://www.atc.am/preview.php?id=538:

2022թ. ամռանը զորացրվող զինծառայողները dimord.am կայքում գրանցվելու համար ներկայացնում են՝

- զորամասի հրամանատարի կողմից տրված տեղեկանք այն մասին, որ զինծառայողի զորացրումը

տեղի է ունենալու 2022թ. ամռանը, /կից ներկայացվում է զորամասի հրամանատարի կողմից տրվող տեղեկանքի նմուշը/, տեղեկանքը ստորագրում և կնիքում է զորամասի հրամանտարը.

- զորացրվող զինծառայողի կողմից տրված լիազորագիր, որը լիազորագրում նշված անձը ներկայացնում է իր բնակության վայրին մոտ գտնվող դպրոց՝ անձնական համար ստանալու և այդ անձնական համարով dimord.am կայքում գրանցվելու համար /կից ներկայացվում է լիազորագրի նմուշը/:

Այսպիսով՝ 2022թ. ամռանը զորացրվող դիմորդը զորամասի հրամանատարից տեղեկանք է վերցնում զորացրվելու մասին, այդ տեղեկանքը և լիազորագիրը կնիքում և ստորագրում է զորամասի հրամանատարը, այնուհետև տեղեկանքը և լիազորագիրը փոխանցվում է լիազորված անձին, որն առանձնացված դպրոց է ներկայացնում տեղեկանքը և լիազորագիրը /իր անձը հաստատող փաստաթղթի հետ/, ստանում անձնական համար, 2022թ. ամռանը զորացրվող դիմորդի անունից dimord.am կայքում հունիսի 26-ից հուլիսի 1-ը՝ մինչև ժամը 17:00 դիմում-հայտ լրացնում՝ ներբեռնելով դիմորդի 3*4 չափսի էլեկտրոնային լուսանկարը, իսկ վճարման կտրոնի փոխարեն ներբեռնում զորամասի հրամանատարի կողմից տրված տեղեկանքը:

Տեղեկանք

Սույն տեղեկանքը տրվում է զինծառայող

_____-ին,

անուն, հայրանուն, ազգանուն

ծնված_____, անձը հաստատող փաստաթղթի համար
_____, առ այն, որ

նա պարտադիր ժամկետային զինծառայող է և զորացրվելու է 2022թ. ամռանը: Սույն տեղեկանքը տրվում է՝ համաձայն Հայաստանի
Հանրապետության կառավարության 26.04.2012թ. թիվ 597-Ն որոշման 16, 30, 80 կետերի՝ բուհերի ընդունելության 2022թ. հուլիսին տեղի ունեցող մրցույթին մասնակցելու և պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդների արտոնություններից բուհերի ընդունելության մրցույթում օգտվելու համար:

_____զորամասի հրամանատար՝

_____

անուն, ազգանուն, ստորագրություն կ.տ.

Լիազորագիր

<< >>_____2022թ.

Ես՝ _____

անուն, հայրանուն, ազգանուն

ծնված_____,

անձը հաստատող փաստաթուղթ_____,

լիազորում եմ_____-ին ,

անուն, հայրանուն, ազգանուն

ծնված_____,

անձը հաստատող փաստաթուղթ_____,

Հայաստանի Հանրապետության կառավարության 26.04.2012թ. թիվ 597-Ն որոշման 30 կետի համաձայն 2022 թվականի հունիսի 26-ից հուլիսի 1-ը /մինչև ժամը 17.00/ ընկած ժամանակահատվածում բուհերի ընդունելության մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերս ներկայացնել առանձնացված դպրոց՝ անձնական համար ստանալու համար և բուհի ընդունելության դիմում-հայտը իմ անունից լրացնել dimord.am կայքում՝ նշելով բուհերի ընդունելության մրցույթին մասնակցության հետևյալ բուհը և մասնագիտությունը, իսկ քննություն/ներ/ հայտագրելու դեպքում՝ հետևյալ քննություն/ներ/ը.

ԲՈՒՀ՝_____

Մասնագիտություն՝_____

Քննություն/ներ/ ՝ _____

_____

Սույն լիազորագիրը տրվում է մինչև 2022թ. հուլիսի 1-ը ժամկետով:

Լիազորագիրը տրվել է << >>_____2022թ.

Լիազորող անձ՝ _____

անուն, ազգանուն, ստորագրություն

Լիազորագիրը հաստատված է_____զորամասի հրամանատարի կողմից _____

Կ. Տ անուն, ազգանուն, ստորագրություն